

կուսած ի վկայագրին LXVI (157 տարւոյ), որ Տրանսիլուանիոյ գնդերը կը յիշէ յանուանէ. բայց, կ'ըսէ Cichorius, թերեւս նախնաբար Պաղեստին էր, որովհետեւ այն տեղ յիշատակուածներուն մէջ կ'երեւայ նաև Կեսարացի Հրեայ մը՝ Bar Simso(n), Callistenis f. n. (Բար Սամսոն՝ որդի Կալիսթենայ):

Վաշտ Ա Ուլփեան Աղեղնաւորաց հեծեալ (Cohors I Vlpia sagittariorum equitata) ներկայացուած Լուիանու բանակին մէջ:

Վաշտ Բ Ուլփեան հեծեալ (Cohors II Vlpia equitata) յԱսորիս 157ին: — Վ.Կ.Գ. CX.

Վաշտ Գ Կամաւոր (Cohors III Voluntaria) ի վալթա Արարիոյ: — Not. XXXVII, 33. հաւանօրէն Դաղմատիայէ փոխադրուած 245էն ետքը: — CIL, III, 2706 = 9724: Թերեւս այս վաշտին անունը անցած է յետոյ Հեաեակաց այն քուռայն (numerus)՝ որուն կը վերաբերին Գաղայի եւ Ելեւթերոսպոլիսի Մարտիրոսաց ոմանք (է. դարու սկիզբը). որոնց համար կ'ըսուի՝ ἐξ βάνδοσ Βολουνατάρειον (ի խմբէ Կամաւորաց): — J Pargoire, Ի Echos d'Orient, VII, 1905, p. 40—43.

Վաշտ ԺԴ Վաղեբեան Զաւղէից (Մաւղէից) (Cohors XIV Valeriana Zabdenorum) ի Մէսոպոտիայի Միջագետաց: — Not. XXXVI, 36.

Առանձինն յիշատակելու է այն դունդը՝ որ զուտ ու պարզապէս Վաշտ (Cohors) անունով կը յիշուի ի Մոքորա Հայաստանի: Not. XXXVIII, 38.

Այս Յանկերը յերեւան կը հանեն բազմաթիւ իրողութիւններ՝ գործնք պէտք է մասնանիշ ընել. նախ՝ Տրայիանու փառասէր՝ բայց եւ նախատեսող գործունէութիւնը. այս թեւոյց եւ վաշտից շատերը կը յորջորջուին Ուլփեան (Vlpia) 182. Բ. դարու երկրորդ կիսուն պատկանելի թուով գորագնդեր նոր ստեղծուած կամ փոխադրուած են զէպ ի արեւելեան սահմանադրութիւնները: Միւսինոյն ժամանակ կը հաւաստենք որ այս գորագնդերը չէին վար լէզններէ, որոնք պարագայից պահանջած ծառայութեան համար նուազ

182 Շատերը նոյնպէս Փլաւեան (Flavia) կը կոչուին. բայց եթէ զատնք Փլաւեանք ստեղծած են՝ գոնէ ապահովապէս իրենք չեն, որ գաննք Արեւելքի մէջ հաստատուած են, հրեական աստիճան պատերազմին ամբի:

յարմար ճանչցուած էին: Նախադաս համարուած են գորարածիւններ՝ որ աւելի ճիշդն ու աշխոյժ մարտադիրութեամբ մը մարդուած են եւ քիչ մը նման ասպարէզի վրայ ճակատներ մղելու պատրաստուած զէպ ի Եփրատ կամ Տիգրիս: Դիոկղետիանու վերակազմութիւնն աւելի նուազ պահերեւ կը տեսնուի՝ Թեւ Դիոկղետեան, Թեւ 3ովիայ (ala Diocletiana, alae Jovine.) վերջապէս կան երեք Թեւ Թեոդոսեանի (alae Theodosianae) Հայաստանի մէջ 183:

Միտ գնելու կէտ մը նոյնպէս որ շատ փոքր թուով սատարք կայանաւորած էին Արարիոյ մէջ՝ «Տեղեկութեան» վկայած վարչութեան յառաջ: Կարծեմ թէ ասի նշան մըն է թէ Ինքնակալը՝ նոյն խակ 105էն ետքը՝ խնամք տարած են օգտուելու Նարատացոց գործակցութեան իրրեւ Դաշնակիցներէ, որով հոսովեական գնդերու խնայութիւն կ'ըլլար: Եւ թերեւս այս մարդկան շատերը կը գնաւորագրուէին Ասորական գորագնդերու համար 184:

Չորսթուերը բուսական ճշգիւ համեմատական եղած կ'երեւան Սախմանաց (limes) այն հատուածին տարածութեան հետ՝ զոր պէտք էին պատասխարել: Միւս կողմանէ այն ամէն գորագնդերը՝ գործնք Առիանոս Կապադովկիոյ մէջ կը յիշէ, Ե. դարուն ամբողջովին կը գտնուին Հայաստանի մէջ. ուստի կ'երեւայ թէ այս տեսակիտով կանոնաւոր կէտ մըն էր ասոնց հաստատակաց տեսականութիւնը, — երեք դարերու տեսականութիւն մը:

Չարմանալու չենք որ Ուսուցաստանի եւ Միջագետաց արձակ երկիրներուն մէջ հետեւակազորքը հազիւ թէ կը ներկայանայ: Աւելի գարմանալի է որ առաջին հայեցումներն ա՛յն է որ վաշտերու թելը՝ ամբողջու-

183 Ասի ուղարկու մանրամասնութիւն մըն է՝ զոր մերձեցրնելու ենք Թեոդոսի Ա. ձեռք Հայաստանի խողազական բաժանման համար կամ զաշանց հետ, վաշտերը կը ցուցնեն որ այնու հանդերձ խոհեօրէն անձնազատ գործունէութիւն կ'ըլլար:

184 Արդեամբք ալ 139էն յառաջ կային միջնե վեց վաշտի Պետրաեաց (cohortes Petraeorum). բայց նորանշան կէտ մըն է որ այս փորձուած հեծեալները աւելի թեւոյց մէջ չեն մուծած: — Այս վաշտի Պետրաեաց թերեւս կը ներկայացնեն այն «վեց վաշտի Սարակիսոսաց» (sex coh. Saracenorum) որոնց մասին կը խօսի Պրորոս (4, 1—2) եւ որոնք կասկածելի կը համարի՝ շատ բառացի մեկնութեամբ մը՝ L'écrivain գիտնականը (Études sur l'Histoire Auguste, Paris 1906, p. 58 ff.):

թեան մէջ զգալապէս աւելի է թեւոյց թուէն. սակայն արդէն այս վաշտերէն շատերը — թուով 24 — հեծեալ են (equitatae), անշուշտ նաև ուրիշ քանի մը հասան ալ էին նոյնպէս՝ թէպէտ մեղի անձանօթ մնացած. բայց մանաւանդ այրուծին շուտով աճեցաւ 185 նոր կազմութիւններով, որոնք Գաղղիկոսէն են 186, եւ ասոնք են՝ Հեծեալի կամ Այրուծի (equites) 187:

(Շարունակելի):

Հ. Յ. ՏԱՇԵԱՆ

ԵՐԿՈՒ ՀՇՅԵՐԷՆ ԳՐԶԵԳՐ ԸՆԵՏԱՐԱՆ ԶԱՆԿԵՐ ՄԵՋ

Լիբանանի Զահլէ փոքր քաղաքին մէջ Հաճընցի Տիար Յարութիւն Յովակիմեանի մօտ տեսայ Հայրերէն երկու ձեռագիր Աւետարան: Չանոնք գնած է Դամասկոսարնակ Ալիդէյնի խօժանցէն, որ կը հաւատուէ՝ թէ այդ գրքերը Կեսարիայէն բերած ըլլայ. փութացի ցուցակադրել, վասն զի սեպհականատէրը մտադիր էր գանոնք Ամերիկա վաճառել:

1.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

ԹՈՒՂԹՔ՝ 300: — ՄԵՆՈՒԹԻՒՆ՝ 21 X 15: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն, 14 X 4.5 (իւրաքանչիւրը): — ՏՈՂՔ՝ 21: — ՆԻԻԹ՝ մագաղաք, ընտիր: — ԹԵՐԹՔ՝

185 Բոսորայի արձանագրութիւն մը (Վատտինյաւ. 1946 = CIL, III, 93) կը յիշէ «Հեծեալի ընտիր բանակին Արաբացոց» (e[qu]ites) sing[ul]ares) exer(citus) Arabici). յայտնապէս այրուծի գնաւորներէ կազմուած գունդ մըն էր՝ քիչ շատ ամէն կողմէ գորհան եղած: Թանկագին բան մը կ'ըլլար արձանագրութեան թուականը գանելը. արձանագրութիւնը գեղեցիկաւ (bonis litteris) կ'ըսէ CIL, որ մեծ բան մը չի ցուցնէր. եւ արձանագրութեան մէջ յիշուած նուիրակն այլուստ անձանօթ է. բայց նոյն խակ այս տիպոսը գոնէ կը ցուցնէ՝ ամէնէն ուշ՝ Գ. դարու ստանէն կէսը:

186 Չմտ. Ritterling, Ի Festschrift für O. Hirschfeld, անդ: 187 Եւ Յուրաքմի (երեքանկիւնի ձախաւք) Հեծեալից (cunei equitum) բառացի «Մեղք հեծեալ», որ Գերմանական ծագմամբ հեծեալաբերու (գերմ. Keil) տիպոս մըն էին (Տակիտ., Գերմ. 6—7) եւ որ Արեւելքի մէջ կը ներկայացուի միայն Պաղմուրացոց միակ կամակամ գրոշարարութեամբ մը (vexillatio comitatensis՝ «մարտական ջոկատ»). Not., Or. VII, 34):

24: — ԿԱԶՄ՝ տախտակ վրան կաշի, գծագրողերով. փակմեքենան ինկած: — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՇՊԱՆԱԿ՝ չուրի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ պահուած, առաջին բուրբք քիչ մը պատուած: — ԶԱՐԴԱԳԻՐՔ՝ շատ սիրուն, բազմագոյն, ոսկեխառն: — ԳԻՐ՝ բոլորագիր, շատ յստակ: — ԽՈՒՍԱՆՅԱԶԱՐԳՔ՝ Աւետարաններու սկզբնատուները գանազան գոյներով, մանաւանդ՝ ոսկեգոյն: — ԼՈՒՍԱՆՅԱԶԱՐԳՔ՝ շատ, գոյնգոյն, գեղեցիկ. ստեղծակարգը առաջնայնքու եւն, հմմտ. քղ. 15ր, 12ա, 17ա, 18ա, 19ա, 19բ եւն եւն: — ԽՈՐԱՆՔ՝ քղ. 15ա, 94ա, 148ա, 234ա, գոյնգոյն, ոսկեգործ. յաշտ: — ՆԿԱՐՔ՝ քղ. 14բ, 93բ, 147բ, 233բ (Մատրէոս, Մարկոս, Դուկաս եւ Յովհաննէս՝ Պրոխորոնի կետ եւ արժիւով) եւ քղ. 4բ—11ա (աղիւսակ, կամառ) ամէնն ալ գոյնգոյն, ոսկեխառն, յաշտ: — ԿԱՍԱՐԿՔ՝ քղ. 1ա, 2ա, 3բ, 4ա, 5բ, 6ա, 7բ—8ա, 9բ, 10ա, 147ա, 232բ, 233ա, 350ա—բ: — ԺԱՄՆԱԿ՝ ՌձԻԹ (= 1680): — ԳՐԻՉ՝ Մկրտում Եղեցի: — ՏԵՂԻ՝ երկուս: — ՏԵՐ՝ Պետրոս: — ՅԻՇԱՍԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ՝ քղ. 295բ—299բ: — ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ՝ տե՛ս վերը:

Մատենա կ' Աւետարան.

Թղ. 12ա—91ա. Մատթէոս (եւ նախադրութիւնք ու գլուխք):

Թղ. 91բ—144ա. Մարկոս (եւ նախադրութիւնք ու գլուխք):

Թղ. 144բ—231ա. Դուկաս (եւ նախադրութիւնք ու գլուխք):

Թղ. 231բ—295ա. Յովհաննէս (եւ նախադրութիւնք ու գլուխք):

Թղ. 294բ—295ա. Իրք կնոջ շնացելոյ:

Թղ. 295բ—299ա. Գլխաւոր յիշատակագրութիւն.

«Յիշատակարան. Անսկիզբն եւ անկատարածն Աստուած, անեղն եւ անհասանելին... Չոր տեսեալ այսպիսի աղբիւր աստուածարուխ աւետարներ բան սուրբ Աւետարանիս Պետրոսս եւ շարժեալ ի սէր մեծաւ ըղձամբ եւ ջերմեանդ փախազանօք ի խորոց սրտէ մեծաւ յուսով, կատարեալ հաւատով, անապաշաւ սիրով եւ բազում ուրախութեամբ եւ զճաղիւր եւ ստանալ զսուրբ մատենաւ հալալ ընչից արդեանց՝ եւ վաստակաց իւրոց, յիշատակ հոգւոյ իւրոյ եւ ծնողացն իւրոց եւ արխնամերձ ազգատոհմին իւրոց: Արդ շնորհիւ Տեան սկսայք եւ ողորմութեամբ նորին կատարեցաք գաստուածարնակ սուրբ Աւետարանս ի թուարբութիւնս Հայկազեան սեռիս Ռձ եւ ԻԹ եւ ի Հայրապետութեան Տեան Յակորայ հանգաբախազաց ծովուն հաստահեղոյս եւ անաղի պարսպին Հայոց եւ ի հովուապետութեանն նահանգին Տեան Ագաբիայի Սրբազան

կաթողիկոսին որ ի սուրբ աթոռն Սըսոյ¹, եւ ի քաղաքս յԵղոփայ, որ ասի Թոխաթ, ընդ հովանեաւ սրբոյն Սարգսի զօրավարին, որ եւ Թախտիղայ կոչի, ձեռամբ սուտանուն, տրուպ եւ հողիկ Մկրտումի մեղօք վիրաւորի եւ անարժանի Ծօշեցոյ: Յիշատակ է Քմաքչի Թորոսի որդի Պետրոսին եւ ծնողացն հօրն Թորոսին եւ մօրն Հոռոմսիմէ եւ հօրեղբորն Սարգսի, նաեւ պապին իւրոյ Դաւթին եւ հանիկին իւրոյ Մանուչակին եւ ամենայն արեան...: Դարձեալ՝ յիշեցէք ի Քրիստոս ստացող աւետարեբ սուրբ տառիս Պետրոսն եւ հենակիցն իւր Թագուհին եւ որդիք նորին Ներսէսն, Սարգիսն եւ Դօլվաթն եւ դատերքն իւր Մարիամ, Հոռոմսիմին եւ նորարողը Վարդենին, նաեւ հանգուցեալ որդիքն՝ Դօլվաթն եւ Թորոսն, դատերքն՝ Ալթոնն, Հոռոմսիմին, յիշեցէք եւ ողորմի Աստուած ասացէք: Կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս Պետրոսն որ Պետեր ասի, որ ստացաւ զսուրբ աւետարանս եւ ետ յիշատակ ի սուրբ Աստուածածինն, որ ի քաղաքն Անթաթի, ի ձեռն Բաղդասար աւագ քահանային ընդ իւրայնոյ միաբանիւն, զոր եւ Տէր Աստուած բարի վայելել տացէ...: Արդ եւ ես յաննալ ամենեցունց, մեղօք լցեալ չարօք, վարանեալ եւ դատապարտեալ, զանիմաստ եւ զախմար, անպիտան եւ անարուեստ Մկրտում եւեթ ծրօղս տեսի այսչափ սէր եւ զիպիագ, որ զաստուծոյնն ունէր Պետրոս, հազիւ յանձն առի եւ յանդգնեալ մխեցի ի սա ձեռս ի ծրել, բայց ողորմութեամբն Տեառն յանկ ելեալ կատարեցի: Նաեւ աղաչեմ անմեղադիր լինել սխալանաց եւ խոչորութեան գրոյս, քանզի կարն իմ ոչ էր աւելի, քանզի ոչ կարացաք օրինակ մի գտանել ստոյգ եւ թէ կայր Բ. կամ Գ. յեկեղեցոյն, հանապաղ յատեան գորով, ոչ կարէին տալ եւ գրեալ եղեւ այլ իմն յօրինակէ, բայց յետոյ բազում աշխատութեամբ եւ պինդ ջանիւ չորեք կողմամբք եւ չորք աւետարանաւ սրբազրեցաք ստոյգ յօրինակէ, զի որք հմուտ իցեն արհեստից չգտանեն ի սմա բան սխալանաց աւելի կամ պակաս եւ այլք որք ոչ գիտեն արհեստ ոչ է պարտ այնպիսիանցն թէ մխէ ի սա ձեռն զաւելորդ բանալ կամ զպակաս ընուլ, այլ այսքանս բաւական են զիտողաց, փոփոխեալ փոխերուն, զզոյշ լինել պարտ է, որ եղեւ ի հին օրինակէ: Այլ եւ ոչ ոք ունի իշխանութիւն մխել ի սա ձեռն եւ հանել ի սուրբ Աստուածածնէն՝ ծախելով կամ գրաւելով կամ

զողանալով եւ թէ ոք յանդգնի եւ առնիցէ, ըստ արժանեացն կրեցէ պատիժ: Եւ թէ ոք տարցէ խնամ սուրբ մատենիս եւ պահեցէ զսա սրբիկ՝ ի հրէ ի ջրէ ի ձիթէ եւ ի նամէ, վարձս առնուցու, ամէն: Մանաւանդ յիշեցէք ի Քրիստոս զՄկրտիչ քաջ քարտուղար քահանայն յԵղոփայցի, որ ծաղկեալ զարգարեաց զսուրբ աւետարեբ աստուածատունկ զբախտս ոսկւով եւ լազուարտով որթով եւ այլ գոյն զգունին եւ երանգ երանգ զեղերօք եւ պայծառացոյց նուննի պարտէզ աստուածարեակ ծիծռամբ ոսկեփետուրիւ զոր Տէր Աստուած վարձս բարեաց պարգեւեացէ եւ ինքն ընդ սուրբ քահանայն զասեցի եւ առնուցու ըստ արժանեացն փոխարէն ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս ամէն: Հայր:

2. ԱՌԵՏԱՐԱՆ

ԹՈՒՂԹՔ՝ 289: — ՄԵՇՈՒԹԻՆՆ՝ 17 X 12: — ԳՐՈՒԹԻՆՆ՝ ԵՐԿԱԻՆ, իւրաքանչիւրը՝ 10.5 X 4: — ՏՈՂՔ՝ 22: — ԹԵՐԹՔ՝ 24: — ՆԻԻԹ՝ Մագաղաթ, ընտիր, քիչ մը մուր գոյնով: — ԿԱԶՄ՝ տախտակ, կաշեպատ, զարդագծերով եւ գծերով խաչ մը առջեւը: — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ՝ պահպանակ չուրի: — ՀԱԳԱՄԱՆՔ՝ լաւ պահպանուած բայց առջեւէն եւ ետեւէն քղերի համուած, նաեւ Ղուկասի նկարն ու սկզբնաւորութիւնը: — ԶԱՐԳԱԳԻՐՔ՝ գոյնզգոյն, շատ յաջող, բուցնազիր: — ԳԻՐ՝ բոլորագիր, յասակ, գեղեցիկ: — ԼՈՒՍԱՆՅԱԶԱՐԳՔ՝ գրեթէ ամեն էջի վրայ, սիրուն երփնեքանգ: — ԽՈՐԱԳԻՐՔ՝ Աւետարաններու սկզբնաւորութիւնները գոյնզգոյն: — ԽՈՐԱՆՔ՝ քղ. 15ա, 96ա, 228 գոյնզգոյն շատ յաջող, ամենուրեք ուկի նաատրէն գործածուած: — ՆԿԱՐՔ՝ քղ. 14բ. Մատթէոս. քղ. 95բ. Մարկոս. քղ. 148բէ վերջ Ղուկասի նկարը համուած քղ. 227բ. Յովհաննէս (մօրուհով եւ առանց Պրոխորոնի) քղ. 2բ—9ա տախտակ. ամէնն ալ գոյնզգոյն, ոսկեգարդ, բաւական յաջող: — ԴԱՏԱՐԿՔ՝ քղ. 1ա—բ, 3բ, 4ա, 5բ, 6ա, 7բ, 8ա, 9բ, 10ա: — ԺԱՄԱՆԱԿ՝ ժե. դարէն առաջ (?): — ՏԵՂԻ՝ անծանօթ: — ՏԵՐ՝ անծանօթ: — ԳՐԻԶ՝ անծանօթ: — ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՆՆՔ՝ կտրուած համուած: — ՏԵՂԵԿՈՒԹԻՆՆՔ՝ տե՛ս վերջ:

- Մատենան է Աւետարան՝
 Թղ. 2բ—9բ. Աղիւսակք:
 Թղ. 10բ—93ա. Մատթէոս (եւ նախագրութիւնը):
 Թղ. 93ա—145բ. Մարկոս (եւ նախագրութիւնը):
 Թղ. 146ա—225բ. Ղուկաս (եւ նախագրութիւնը):
 Թղ. 225բ—283բ. Յովհաննէս (եւ նախագրութիւնը):
 Թղ. 288բ. Իրք չնացեալ կնոջ:

¹ Ուշագրաւ է հոս Աղարիս կաթողիկոսի յիշատակութիւնը գրէ՛ն մը, որ Եղոփայ կը գրէ. Միտի արժանի վրայ կը բազմէր 1674—1686 Մահակ Ա. Քիւրեղի կաթողիկոս. 1677էն սկսեալ մինչեւ 1681 իրեն արժանակից (կամ հակաթոռ) կը յիշուի Աղարիս կարկանդակ: Այս տեղ միայն Աղարիս առանձին, առանց Մահակի յիշատակումը կը գտնենք (հմտ. իր մասին Բարիկէն Ա. կաթողիկոս, Պատմութիւն կաթողիկոսաց Կիւրեղոյ. Անթիլիան 1939, էջ 411—420):

ԽՄՐԱԳՐՈՒԹԻՆՆ

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՆՆՔ. գլխաւորը կտրուած ու հեռացուած:

Թղ. 2բ (տարբեր գրով). «Վաճառեցաւ մագաղաթայ սուրբ աւետարանս ի Բերիայ իր (°). Միքայէլ աւագ էյեցոյ որդոյ (°) եւ որդւոյն յեաննէ (°):

ՂԼԵ ամի Տեառն ի Ս. Վ. Դանիէլ: լէ՛՛՛՛՛՛ (1488)ին օգեստ. 10ին այս սուրբ Աւետարան Գրիգոր հօրիս յիշատակ է որ հանգուցեալ... Գիքոր աղայիս եւ որդւոյն եւ հանգուցեալ էլ յամսին որ... կին... սր... յիշատակ է ծառայ տեսան (կէտերու տեղերն անընթեանելի, նաեւ շեղագիր՝ կարմրագիր ստորագրութիւնը (Տէր Գրիգոր Հովեան?):

Թէյրուք. 1950: 2. ՀԱՄԱԶԱՍՊ ՈՍԿԵԱՆ

ՊԵՏՐՈՒԹԻՆՆ ԼԵԶԱՐԵԱՆ ՏՈՇՄԻ

(ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՈՒՐՈՒԱԳՇԵՐ)

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

Աշխատախիւրեց՝ ՅՈՎԱԿԻՄ ԹԱԳԷՆՈՍԵԱՆ
 ԳԼՈՒԽ Դ.
 ՅՈՎԱԿԻՄ ՂԱԶԱՐԵԱՆ ԼԱԶԱՐԵԱՆՅ
 (1743—1826)

Յեղապետ Խօջա Ղազարի չորրորդ՝ կրտսեր որդին էր Յովակիմ Ղազարեանը. նա ծնուել է Ն. Ջուղայում 1743 թ. սեպտեմբեր 5ին:

Ղազարեան մեծահամբաւ տոհմի առաջին եւ երկրորդ սերունդի բոլոր անդամների կեանքի ու գործունէութեան մասին տեղեկութիւնները, ցաւօք սրտի, չափազանց պակասաւոր են, մինչդեռ կարելի էր սպասել, որ նրանց երկու կենսագիրները՝ Մ. Մսերեանցն ու Պրոֆ. Ալ. Ջինովեւը, որոնք երեւոյ աշխատութիւնները գրել են 1856 եւ 1863 թթ. այսինքն՝ երբ դեռ կենդանի էին տոհմի երկու նշանաւոր ներկայացուցիչները՝ Յովհաննէս եւ Խաչատուր Յովակիմեան Ղազարեանները, երբ ողջ էին նաեւ շատերը նրանց ժամանակակիցներէր, երբ դեռ թարմ էին յիշողութիւնները, կը տային անելի հարուստ եւ աւելի արժէքաւոր տեղեկութիւններ նրանց մասին, բայց իրականի մէջ այդպէս չէ. երկուսն էլ շատ հակերձ եւ նոյն իսկ շատ ժլատ են...:

Մեզ օգնութեան է գալիս կրկին Ալ. Երեցեանը իր մի շարք ուսումնասիրական պատմական մեծարժէք գործերով, որոնց մէջ ցրուած են արժէքաւոր տեղեկութիւններ Ղազարեանների մասին:

Յովակիմ Ղազարեան Ղազարեանցը ունեցել է թէ պետական եւ թէ ազգային հասարակական բեղուն գործունէութիւն, սակայն նրա մեծագոյն գործն եղել է ամենից առաջ ի կատար ածել իր մեծ եղբոր՝ կոմս Յովհաննէս Ղազարեանցի կտակը՝ հիմնել Մոսկուայում հայ չքաւոր մանուկների համար Հայոց դպրոց, հանգուցեալի թողած 200.000 ուրբի դրամազլխով:

Եւ արդարեւ, Յովակիմ Ղազարեանի ամբողջ կեանքը կապուած է եղել այդ դպրոցի՝ Ղազարեան ձեռնարանի հիմնադրութեան նախապատրաստական եւ կառուցման աշխատանքների, նրա կրթական գործի լաւագոյն կազմակերպութեան, նրա նիւթական ապահովութեան եւ իրաւական վիճակի բարեկարգման մեծամեծ ու տանջող հոգսերի հետ: Ձեռնարանի առաջին տասնամեակի պատմութիւնը՝ պատմութիւնն է ազա Յովակիմի թափած ջանքերի, նրա բարոյական ու նիւթական գոհարերութիւնների: Նա եղել է կառավարութիւնից հաստատուած ձեռնարանի առաջին հոգարարուն եւ de facto նաեւ նրա առաջին վերատեսուչ (Դիրեկտորը):

Նրա պետական ծառայութեան մասին գրեթէ ոչինչ չգիտենք. գիտենք, որ Մոսկուայի նահանգի ուսն ազնուականութիւնը ընդունել է նրան իր շարքերի մէջ 1792 թ. որ ստացել է 1812 թ. Հայրենական պատերազմի առթիւ կայսերական հրովարտակով սահմանուած Ոսկեպղնձեայ Ծքադրամ Վլադիմիրեան ժապաւէնով. որ 1816 թ. ստացել է Աստղատական չքանչան Հրամանատար Կարգի Ս. Յովհաննու Երուսաղէմացոյ:

Այս Յովակիմը ունեցել է Տուրա քաղաքից 45 վերստ հեռաւորութեան վրայ կալուած՝ Պոկրովսկոյէ գիւղը:

Այս կալուածում Յովակիմ Ղազարեանը 1787 թ. ընդունել է Եկատերինա Բ. կայսրուհուն իր մեծ շքախմբով, բաղկացած 21 երկուսն հոգուց, երբ մեկնելիս է եղել այցելութիւն տալու նորանուած Նոր Ռուսիային՝ Խերսոն քաղաքին ու Ղրիմին: Այս Յովակիմը ընդունել է կայսրուհուն մեծ պատիւ: